

## Նախագահը Հաստատեց Ուժեղ Եւ Արդիական Բանակ Ունենալու Կարելորութիւնը



**ԵՐԵՒԱՆ.** Հայոց բանակի օրուան առիթով Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի, Ազգային անվտանգութեան խորհուրդի անդամներու, պաշտպանութեան նախարարութեան եւ զինուած ուժերու ղեկավար կազմին ընկերակցութեամբ՝ Կիրակի, 28 Յունուարին այցելեց «Եռաբլուր» զինուորական պանթէօն՝ յարգանքի տուրք մատուցելու իրենց կեանքը հայրենիքի անկախութեան համար զոհաբերած հայորդիներու յիշատակին: Ներկաներու շարքին էին վարչապետ Կարէն Կարապետեան, պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան, արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան, Հայաստանի Հանրապետութեան ոստիկանապետն ու գլխաւոր դատախազը:

Նշենք, որ բարձրագոյն ղեկավարութեան այցելութենէն բացի, «Եռաբլուր» զինուորական պանթէօն այցելողներու շարքին եղաւ նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահութեան գլխաւոր թեկնածու Արմէն Սարգսեան: Նախագահի թեկնածուին ընկերակցեցան նախկին վարչապետ Վազգէն Սարգսեանի եղբայրը Արմէն Սարգսեան եւ գրող-հրապարակագիր Զօրի Բալայեան:

Մինչ այդ, նախագահ Սարգսեան հայրենիքի սահմանները պաշտպանելու ընթացքին ցուցաբերած անձնուիրութեան եւ խիզախութեան համար զոհուած զինուորներու ընտանիքներու անդամներուն յանձնեց զոհուած հերոսներուն յետ մահու շնորհուած պետական բարձր պարգեւները:

Բանակի օրուան առիթով հանրապետութեան նախագահը նաեւ յղեց իր շնորհատրական ուղերձը, որուն մէջ անդրադարձաւ բանակի կարելորութեան՝ երկրի անվտանգութեան եւ շրջանի կայունութեան ու խաղաղութեան համար: Նախագահը իր ուղերձին մէջ ըսաւ. «Մեր բանակը, ըլլալով մեր ժողովուրդի անվտանգութեան յուսալի երաշխիքը՝ նաեւ շրջանային կայունութեան շատ կարելոր բաղադրիչն է:

Մենք գիտենք, թէ ի՞նչ կը նշանակէ պետականութեան եւ կանոնաւոր բանակի բացակայութիւն եւ զիտենք, թէ որքա՛ն սուղ վճարած ենք անոր համար: Ծանր փորձութիւններ տեսած ազգի մը համար սեփական բանակի գոյութիւնն իսկ ունի առանձնայատուկ ընկալում:

«Մեր բանակը համաժողովրդական բանակ է, որ իր ստեղծման օրէն կը զգայ ժողովուրդի սերն ու յարգանքը, կը վայելէ ժողովուրդի վստահութիւնն ու անվերապահ աջակցութիւնը:

Շարունակութիւնը էջ 3

## Վարդան Նազիրեան Պարգևատրուած Է Երախտագիտութեան Մետալով



Հանրապետութեան Նախագահ, զինուած ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատար Սերժ Սարգսեան Յունուար 28-ին՝ Բանակի օրուան առիթի, Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերուն ցուցաբերած աջակցութեան համար բարերար Վարդան Նազիրեանին (Վարթան ՆԱԶԵՐԵԱՆ, ԱՄՆ), պարգևատրած է Երախտագիտութեան մետալով: Կից «Հայերն այսօր»-ը կը ներկայացնէ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագիրը.

Ղեկավարուելով 2005 թուականի փոփոխութիւններով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 16-րդ կէտով եւ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետութեան պետական պարգեւների եւ պատուաւոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքը՝ որոշում եւ մ.

Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերին ցուցաբերած աջակցութեան համար բարերար Վարդան ՆԱԶԵՐԵԱՆԻՆ (ԱՄՆ) պարգևատրել Երախտագիտութեան մետալով:

ՀՄՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
Ս.ՍԱՐԳՍԵԱՆ

2018թ. Յունուարի 19 - Երեւան





### ՓՐՈՏԵՂԻՏԵԻՏ

Փրոսոպիկէս անօքիւս յիա տա կուին

տու Տիփի Կասսէսիան

#### ՓՈՏՈՒ ԽՐԵԻԱԶՈՒՄԻ ՄԻԱ ԵՆԱ ԿԱՂԿՈՒ...

Տը քըասմէնօ սիմէւօմ

Կա՛ր արիլն քըքիւս յըստի յիա սիւսի

Փիլօս յուօ օ սօօիօս անիկի ստուս

Եկէւնօ սու սիքիլլէտա յըստի սիւսի

Կի օտա՛ն տէլիւսիւս յըստի սիւսի

### ՍԱՐ՝ ՈԱԿ-Ի, ԹՍՄ-Ի ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ՝ ԱՆԹՈՒԱՆ ՊԱԶԱՐՊԱՇԵԱՆԻ

Ուիլիամ Սարգսիս, Փետրուար 23-ին իր յալիստէնալան հանգիստը զտաւ Անթուան Պազարպաշեան:



Անթուան Պազարպաշեան կը ստանայ ԹՄՄ-եան երկարամեայ ծառայութեան մրցանակը ձեռամբ Դոկտ: Արշալիր Կեօնճեանի, 2015 տարուայ ԹՄՄ-եան Համագումարի ընթացքին:

Ծնած էր Պէյրութ, Լիբանան, Եւրօքը եւ Սարգիս Պազարպաշեան ընտանիքի երդիքին տակ: Անթուան Միացեալ Նահանգներ տեղախուած էր 1960-ին: Ան շուտով լիթուանացի ասպարէզը ընդգրկեց եւ հանդիսացաւ անձնուէր հայրն ու անուսիւնը իր նորակազմ ընտանիքին որ եղաւ իր երջանկութեան եւ հպարտութեան աղբիւրը: Անթուանը ճանչցուեցաւ որպէս սրամտութեան եւ երգիծանքի մարմնացունը:

Ան եղաւ նուիրեալ ծառայող մը Ֆիլատելիֆիայի Հայ համայնքին, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու եւ Քանադայի հայութեան: Ան կազմակերպած է եւ տնօրինած հարիւրաւոր յայտագիրներ Ֆիլատելիֆիայի հայ համայնքին մէջ: Ան նախկին ատենապետն էր Ֆիլատելիֆիայի Թէքէեան Մշակութային Միութեան մասնաճիւղին, անդամ ԹՄՄ-ի Միացեալ Նահանգներու եւ Քանադայի Կեդրոնական Վարչութեան եւ անոր Գործադիր Մարմնին, անդամ մը ՀԲԸՄ-ի Ֆիլատելիֆիայի մասնաճիւղի Գործադիր Մարմնին եւ կրքոտ անդամ մը Ռամկավար Ազատական Կուսակցութեան Միացեալ Նահանգներու եւ Քանադայի Հրջանային Վարչութեան: Անթուանը նաեւ երկար տարիներու գործօն անդամ մըն էր Ս. Սահակ Ս. Մետրոպոլիտան Առաքելական Եկեղեցւոյ ծովսիւն եւ անդամ մը Վարդանանց Ասպետներուն:

2015-ին Անթուան արժանացաւ Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան Յկեանս Իրագործումներու Պատուանշանին: Իր բացակայութիւնը զգալի պիտի մնայ իր ընտանիքին, բարեկամներուն եւ Ֆիլատելիֆիայի ինչպէս նաեւ Ս. Նահանգներուն ու աշխարհացրի իր բարեկամներուն մօտ:

### ԵՆԱՐՄԻՐԻ ՄԷՉ ՅՈՒԿԱՐԿԱՒՈՐԵՂԻՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿԱՆԵԱՆՐ

29 Յունուարին «Ենարմիր» յուշահամալիր-պանթէոնին մէջ յուղարկաւորեղին հասարակական, քաղաքական գործիչ, Արցախեան ազատամարտի մասնակից Սարգիս Հայկանեանը:



Անոր հարազատները, ընկերները, գործընկերներն ու հասարակական գործիչները Հայկանեանին վերջին հրաժեշտը տուին:

Նշէնք, որ Սարգիս Հայկանեանը մահացած էր 20 Յունուարին՝ Ֆրանսայի մէջ, ուր կը բուժուէր: Անոր մահէն ետք հարազատները Հայկանեանը Ենարմիրի մէջ յուղարկաւորելու թոյլտուութեան համար դիմած էին ՀՀ պաշտպանութեան նախարարութիւն: Հիմնաւորումները ներկայացնելէ ետք ՊՆ-ն անոր Ենարմիրի մէջ յուղարկաւորելու համաձայնութիւն տուած էր:



Շարունակում էջ 1-ի

### Նախագահը Հաստատեց Ուժեղ...

Վստահ եմ, որ ապագային եւս Հայաստանի Հանրապետութիւնը եւ ժողովուրդը պիտի գուրգուրան իրենց առաջնեկին»:

Նախագահ Սարգսեան իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ բանակի այսօրուան վիճակին եւ ըսաւ. «Գաղտնիք չէ, որ այսօր մենք որակապէս այլ բանակ ունինք՝ զինուած ամէնէն արդիական զինատեսակներով, յագեցած ժամանակակից սարքաւորումներով: Բայց մենք կը շարունակենք եւ պիտի շարունակենք հետեւողականօրէն բարձրացնել մեր բանակի մարտունակութիւնը: Այդ նպատակով ընդունուած է բանակի արդիականացման եօթնամեայ ծրագիր, զոր կեանքի պիտի կոչենք ժամանակացոյցին համապատասխան: Անձամբ ես ջանք պիտի չխնայեմ, որ մեր բանակը դառնայ աւելի արդիական եւ աւելի ուժեղ»:

Իր խօսքի աւարտին, նախագահ Սարգսեան ըսաւ. «Այսօր մենք Եռաբլուր կը գտնուինք: Այս սրբազան տօնին օրը մեր պարտքն է զլուխ խոնարհել յիշատակին առջեւ մեր հերոսներուն, որոնք իրենց կեանքին գնով մեզի կեանք եւ ազատութիւն պարգեւեցին: Վշտակից ենք մեր բոլոր զոհուածներու ընտանիքներուն եւ հարազատներուն: Կոչ կ'ուղղենք սերունդներուն՝ միշտ վառ պահելու անոնց յիշատակը եւ Հայաստանի ժողովուրդին այս կարելոր տօնի խորհուրդն ու իմաստը»:

Նշենք, որ հանրապետութեան նախագահը Բանակի օրուան առիթով, նախագահական նստավայրին մէջ Հայաստանի Հանրապետութեան բարձր պարգեւներով, շքանշաններով եւ մետալներով պարգեւատրեց խումբ մը զինուորներ եւ ազատամարտիկներ հայրենիքի սահմանները պաշտպանելու ընթացքին ցուցաբերած իրենց նուիրումին եւ խիզախութեան, ինչպէս նաեւ մատուցած նշանակալի ծառայութիւններուն համար ու անոնց շնորհեց բարձրագոյն զինուորական կոչումներ:

### Յաղթանակ կը Նուիրեմ Հայոց Բանակին. Արցախցի Մարզիկը՝ Աշխարհի Ախոյեան

Աշխարհի «Ultimax» դաշնութեան նախաձեռնութեամբ, Յունուար 27-28, Վրաստանի Ռուսթաւ քաղաքին մէջ կայացած է խառն մենամարտերու (MMA) աշխարհի առաջնութիւն, որուն Արցախէն մասնակցած է «Արմֆայթինկ» դաշնութեան մարզիկ Արմէն Հայրապետեանը եւ դարձած է աշխարհի ախոյեան:



Artsakhpress.am-ի թղթակիցին հետ զրոյցի մը ընթացքին՝ Ա. Հայրապետեան ըսած է, որ ինքը առաջին անգամ ըլլալով կը մասնակցի MMA աշխարհի առաջնութեան:

Ախոյեանի խօսքով՝ առաջնութեան մասնակցած են աշխարհի 22 երկիր ներկայացնող մարզիկներ:

«Առաջին խաղի 26-րդ վարկեանին գիտարուեստական նոկաութի ենթարկած են Ռուսիոյ Դաշնութիւնը ներկայացնող մարզիկ Արսլանալի Գաճիմուրզաեւին եւ յաղթանակ արձանագրած՝ արժանանալով ոսկի գօտիի, մետալի եւ պատուոյ գիրի: Ինձի՝ արցախցի մարզիկիս, պատիւ է մասնակցիլ նման առաջնութեան եւ դառնալ աշխարհի ախոյեան», - նշած է Ա. Հայրապետեան եւ ընդգծած, - «Յաղթանակ կը նուիրեմ հայոց բանակին»:

### Գանատայի Սօտ Հ.Հ. Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Լեւոն Մարտիրոսեան Կ'ընդունի Մոնթրէալի Ռ.Ա.Կ. եւ Թեքէեան Մշակութային Միութեան Ներկայացուցիչները



Ուոքի ձախէն աջ, Աւետիս Պազգալեան՝ «Ապագայ»-ի խմբագիր, Աբրահամ Տէմիրճեան, Աւետիս Ճիհանեան, Դոկտ. Արշալիր Կեօնճեան, Դեսպան Լեւոն Մարտիրոսեան, Արա Պալեան, Արթօ Մանուկեան, Տօթթ. Հրայր Տէր Գեորգեան, Պարգեւ Նազարեթեան եւ Նուպար Պապիկեան

Շաբաթ 27 Յունուար 2018-ին, Մոնթրէալ ՌԱԿ Էօժէն Փափազեան Ակումբի, Թեքէեան Մշակութային Միութեան եւ «Ապագայ» շաբաթաթերթի վարչական ներկայացուցիչները, գլխաւորութեամբ Ռ.Ա.Կ. Գերագոյն Խորհուրդի անդամ Դոկտ. Արշալիր Կեօնճեանի պաշտօնական այցելութիւն մը տուին Գանատայի մօտ Հ.Հ. Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Պրն. Լեւոն Մարտիրոսեանին, Օթթաուա-ի Հ.Հ. Դեսպանատան մէջ:

Սօտ երկու ժամ տեւող ջերմ մթնոլորտի մէջ կայացած այս այցելութեան ընթացքին, Վսեմաշուք Դեսպանը լայն տեղեկութիւններ տուաւ Հայաստանի մէջ այս օրերուն, քաղաքական, տնտեսական եւ այլ բնագաւառներուն մէջ տեղի ունեցող կոնկրէտ եւ դրական կարելոր գարգացումներուն մասին:

Ապա, պրն. դեսպանը յատուկ կերպով մանրամասնեց եկող ամիսներուն ընթացքին Երեւանի մէջ տեղի ունենալիք կարելոր նշումները: Յաջորդաբար, Հայաստանի Պետականութեան Հարիւրամեակը, Երեւանի 2800 ամեակը եւ մանաւանդ Համաշխարհային Ֆրանքօֆոն-ի համաժողովը որ տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր ամսուայ ընթացքին եւ ուր անձնապէս ներկայ պիտի ըլլան աւելի քան յիսուն երկիրներու պետական գլուխները իրենց պաշտօնական շրջապատով:

Մասնաւորելով Գանատայի պարագան, պարոն դեսպանը տեղեկացուց թէ Գանատայի Վարչապետ Ճասթին Թրուսօն ներկայ ըլլալով այս համաժողովին, ընդունած է երկարաձգել իր այցելութիւնը, այս անգամ որպէս Գանատական Պետական Պաշտօնական այցելութիւն Հայաստանի Պետութեան:

Փոխադարձ խօսակցութեան ընթացքին ՌԱԿ եւ Թեքէեան Մշակ. Միութեան ներկայացուցիչները տեղեկութիւններ եւ բացատրութիւններ տուին Մոնթրէալահայ գաղութին մէջ երկար տարիներէ ի վեր, կազմակերպութեան տարած անցեալի եւ ներկայի լայնածաւալ եւ արդիւնաշատ գործողութեանց մասին:

Ջերմ այս հանդիպման վերջաւորութեան պրն. դեսպանը իր գնահատանքը եւ յաջողութեան մաղթանքները յայտնեց այցելու պատուիրակութեան որուն պատասխանելով ՌԱԿ եւ Թեքէեանի ներկայացուցիչները փոխադարձ մաղթանքներով իրենց հաստատ պատրաստակամութիւնը յայտնեցին կարելի բոլոր ձեւերով, ի պահանջելի յարգին, օգտակար հանդիսանալով Հայաստանի երիտասարդ եւ կորովի Դեսպանին գործունէութեանց:

Թղթակից



### Մամուլի հաղորդագրություններ

#### ՀՀ Ջինված ուժերի կազմավորման 26-ամյակին նվիրված ընդունելություն Թբիլիսիում

Հունվարի 26-ին Վրաստանում ՀՀ ղեսպանությունը ՀՀ Ջինված ուժերի կազմավորման 26-ամյակի առթիվ Թբիլիսիում կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին Վրաստանի պաշտպանության նախարար Լևոն Իզորիան, նախարարի առաջին տեղակալ Լեյլա Չիքովանին, ՋՈՒ Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Չաչիբայան, պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Դավիթ Թեգաձեն, ՊՆ և ՋՈՒ Գլխավոր շտաբի վարչությունների և ծառայությունների պետեր, Վրաստանի ԱԳՆ պաշտոնյաներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական և ռազմադիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, ռազմական փորձագետներ, Վրաստանի խորհրդարանի հայագի պատգամավորներ, հոգևոր դասի և վիրահայ համայնքային կառույցների մի շարք ներկայացուցիչներ:



Ողջույնի իր խոսքում Վրաստանում ՀՀ ռազմական կցորդ, գեներալ Սամվել Ռամազյանը ներկայացրեց օրվա խորհուրդն ու Հայոց զինուժի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում, ինչպես նաև անդրադարձ կատարեց Հայոց բանակի կազմավորման գործընթացին ու դրա անցած ուղուն: Խոսելով հայ-վրացական դարավոր զինակցության մասին՝ բանախոսը, մասնավորապես, անդրադարձավ պատմական այն դրվագներին, որտեղ հայերն ու վրացիները համատեղ ուժերով պայքարել են օտար զավթիչների դեմ՝ հանուն իրենց ազատության:



Վրաստանի պաշտպանության նախարար Լևոն Իզորիան իր ելույթում ընդգծեց հայ և վրացի ժողովուրդների միջև պատմականորեն ձևավորված փոխգործակցության կարևորությունը շեշտելով ռազմական համագործակցության զարգացման անհրաժեշտությունը ի շահ երկու երկրների և տարածաշրջանային անվտանգության: Նախարարը, անդրադառնալով հայ-վրացական բարեկամությանը, մատնանշեց, որ Հայաստանը մշտապես դիտարկվում է որպես բարեկամ երկիր:

Վրաստանում ՀՀ ղեսպան Ռուբեն Սադոյանն իր շնորհավորական խոսքում նշեց այն կարևոր դերակատարությունը, որն իրականացնում են ՀՀ Ջինված ուժերը երկրի անվտանգության պահպանման ուղղությամբ:

Վրաստանում ռազմադիվանագիտական կորպուսի դուայեն, Չեխիայի ռազմական կցորդ Շտեֆան Գրիվալսկին հաջողություն մաղթեց ՀՀ Ջինված ուժերին իրենց ամենօրյա գործունեության մեջ համոզմունք հայտնելով, որ հայ զինվորականության մերօրյա սերունդը մշտապես հավատարիմ կլինի նախնիներից ժառանգած պատմական հարուստ ավանդույթներին:

Ելույթներին հաջորդեց պաշտոնական հյուրասիրություն՝ հայկական և վրացական երգ ու պարի ուղեկցությամբ:

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերու նախարարություն

### Լեւոն Մնացականեան. «Բանակի ներկայ հզօրութիւնը 2016-ի մարտունակութեան հետ համեմատելի չէ»



ՀՀ պաշտպանութեան բանակի ներկայ հզօրութիւնը 2016-ի մարտունակութեան հետ համեմատելի չէ:

Այս մասին, ըստ Artsakhpress.am-ի, Չորեքշաբթի՝ Յունուար 24-ին, հրաւիրած մամուլի ասուլիսի մը ժամանակ, յայտարարած է Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեան:

Խօսելով ԱՀ պաշտպանութեան բանակի 2017-ին կատարուած աշխատանքներուն մասին՝ Լ. Մնացականեան ըսած է, որ համարժեք միջոցներ ձեռնարկուած են առաջին հերթին մարտական զօրահաւաքային պատրաստակամութեան համար:

«Կառուցուածքային փոփոխութիւններուն իբրեւ արդիւնք՝ բոլոր առումներով մեր հնարաւորութիւնները աճած են, փոխուած են մօտեցումները պահեստազօրայիններու հետ եւ հաւաքներու միջոցով աւելցուած է ռազմաուսուցանուած պահեստազօրներուն քանակը բոլոր մասնագիտութիւններով՝ աւելի շատ՝ հրասայլային, հակահրասայլային եւ հրետանային ստորաբաժանումներու մասնագէտներու», - ըսած է պաշտպանութեան նախարարը եւ աւելցուցած, որ հիմնական շեշտը շարունակած է մնալ մարտական հերթապահութեան, ժողովուրդի անվտանգութեան ապահովման եւ դիրքապահ զինծառայողներու համար աւելի բարենպաստ պայմաններու ստեղծման վրայ:

Նախարարը նշած է նաեւ, որ կատարելագործուած են բոլոր ճարտարագիտական, ամրաշինական կառոյցները, կահաւորուած են նոր դիրքեր: Փորձած են զարգացնել ճանապարհային ցանցը, որ անչափ կարեւոր է մարտական գործողութիւններու ժամանակ՝ հիմնական ուշադրութեան կեդրոնին պահելով անձնակազմի անվտանգութեան ապահովման խնդիրը:

«Հրետանիի, հակաօդային պաշտպանութեան հնարաւորութիւնները եւս նախկինի հետ համեմատելի չեն: Աւելցուած է նաեւ նշանուղիներու եւ մեր յարձակման ընթացքին խցուող նշանակէտներուն քանակը՝ ինչպէս գիշերային, այնպէս ալ ցերեկային պայմաններու մէջ: Ճարտարագիտական-թիկունքային ապահովման հարցերով եւս մեծ ծաւալի աշխատանքներ տարուած են, եւ հիմնական շեշտը դրուած է դաշտային պայմաններու մէջ միաւորումներու, զօրամասերու, ստորաբաժանումներու կենսագործունեութեան ապահովման վրայ», - ըսած է Լ. Մնացականեան:

**ԱՄԷՆ ԳՆՈՎ ՊԷՏՔ Է  
ՊԱՀՊԱՆՈՒԻ  
ՀԱՅՐԵՆԻՔԻ  
ԶԱԻԱԿՆԵՐՈՒ ԱՐԵԱՄԲ  
ՉԵՌՔ ԲԵՐՈՒԱԾԸ**



### ԵՆԽՎ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ ՅՈՅՍ ՈՒՆԻ

Երոպական խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) նորընտիր նախագահ Միքելե Նիքոլեթի յայտարարած է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին վերաբերեալ իր դիրքորոշումը կը համընկնի ԵՆԽՎ-ի դիրքորոշման հետ: Այդ մասին ան յայտնած է ազրայէլ-ճանական «Ռիփորթ» լրատու գործակալութեան:



«Լեռնային Ղարաբաղի տագնապին վերաբերեալ դիրք-որոշումս կը համընկնի Երոպական խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի դիրքորոշման հետ: ԵՆԽՎ-ն յարգանքով կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման ուղղութեամբ աշխատանք տանող միջազգային կազմակերպութեան, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի դերին», յայտարարած է Նիքոլեթի:

Ան նշած է, որ ԵՆԽՎ-ն պատրաստ է աջակցելու որեւէ գործունէութեան, որ ուղղուած է դարաբաղեան տագնապի խաղաղ լուծման:

«Ես Լեռնային Ղարաբաղի տագնապի շուտափոյթ խաղաղ լուծման յոյս ունիմ», ըսած է ան:

Նշենք, որ ԵՆԽՎ-ն 22 յունուարին Սթրասպուրկի ձմեռային նստաշրջանին ժամանակ կառոյցի նոր նախագահ ընտրած էր Իտալիոյ պատուիրակութեան անդամ Միկելե Նիքոլեթին: Ան վեհաժողովին պիտի նախագահէ մէկ տարուան ժամկետով՝ վերընտրուելու կարելիութեամբ:

### Դուք հերոս էք. Փարիզի քաղաքապետը Կարօ Փայլանին յանձնած է Grand Vermeil պատուոյ մետալը

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը եւ Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարօ Փայլանը Փարիզի մէջ հանդիպած են Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու Համակարգող խորհուրդի ամենամեայ ընթրիքին:



Չեռնարկին ընթացքին Փարիզի քաղաքապետ Անն Իտալկոն Կարօ Փայլանին յանձնած է Grand Vermeil պատուոյ մետալը: Այս մասին կը յայտնէ News.am-ը:

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւորին ծափահարած է ընթրիքին մասնակցող 500 մարդ:

«Ձեր կեանքը մշտական վտանգի մէջ է: Շնորհակալութիւն այն բանին համար, որ դուք կ'ընէք: Դուք ժողովրդավարութեան հերոս էք, հերոս, որ կը պաշտպանէ մարդու իրաւունքները: Ամէն անգամ, երբ մեր կարիքը ունենաք, հայերը ձեր կողքին պիտի ըլլան, Փարիզը ձեր կողքին պիտի ըլլայ», - յայտարարած է Անն Իտալկոն:

Հանդիպման մասնակցած են նաեւ հրեական համայնքի ներկայացուցիչներ, ֆրանսացի փաստաբան եւ պատմաբան, նացիստական յանցագործութիւնները մերկացնելու եւ պատժելու մարտիկ Մերժ Քլարսֆելտը կնոջ՝ Պէթթայի հետ, որ ստացած է հայ համայնքի «Խիզախութեան համար CCAF» մետալը:

«Մենք մշտապէս հայ ժողովուրդի կողքին եղած ենք, - յայտարարած է Մերժը: - Եւ մենք կը պայքարինք այն բանի համար, որպէսզի Իսրայէլը նոյնպէս ճանչնայ Հայոց

Ցեղասպանութիւնը: Մենք նաեւ յոյս ունինք, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտման քրեականացումը պիտի ընդունուի նաեւ Ֆրանսայի մէջ՝ ճիշդ այնպէս, ինչպէս ընդունուած է հրեայ համայնքը պաշտպանող օրէնքը»:

Grand Vermeil-ը հիմնադրուած է 1948-ին: Անիկա կը շնորհուի սեփական մասնագիտութեամբ երակարատեւ, ազնիւ եւ պտղաբեր աշխատանքի համար:

### Արդարութեան եւ ճանաչման Համար Պայքարը Մեր Պայքարն է. Մաքրոնը՝ Հայոց Ցեղասպանութեան Մասին

Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Էմանուէլ Մաքրոնը մասնակցած է Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի կազմակերպած ամենամեայ ընթրիքին:



Ըստ Armenpress.am-ի ընթրիքին մասնակցած են նաեւ Փարիզի քաղաքապետ Անն Իտալկոն, Իլ-տէ-Ֆրանս

շրջանի նախագահ Վալերի Փեգրետը, Ֆրանսայի խորհրդարանի պատգամաւորներ, ներառեալ՝ հայ պատգամաւոր Փաթրիք Տէւէճեանը, Լիոնի քաղաքապետ Ժորժ Գեբենեգեանը, Ֆրանսայի հայկական եւ հրեական համայնքներու ներկայացուցիչներ: Ընթրիքի պատուոյ հիւրն էր Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարօ Փայլանը: Ընթրիքի ընթացքին ունեցած ելոյթով Մաքրոնը անդրադարձած է հայ համայնքը յուզող շարք մը հարցերու, ներառեալ՝ Հայոց Ցեղասպանութեան եւ Լեռնային Ղարաբաղի խնդիրներուն:

«Արդարութեան եւ ճանաչման համար պայքարը մեր պայքարն է: Մենք այդ պայքարը կը տանինք յիշելով եւ Հանրապետութեան օրացոյցին վրայ ցեղասպանութեան յիշատակման համար օր ամրագրելով», - նշած է Մաքրոնը՝ աւելցնելով, որ այդ հարցին շուրջ որոշումը պիտի ընդունուի յառաջիկայ ամիսներուն ընթացքին:

Խօսելով Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն մասին՝ Ֆրանսայի նախագահը ընդգծած է, որ պիտի փորձէ ներգրաւել Թուրքիոյ նախագահ Էրտողանը կանտաւոր երկխօսութեան մէջ. «Երբեմն, հակառակ լրատուամիջոցներու ցանկութիւններուն»: «Ես անոր ըսած եմ այն ամէնը, ինչ կայ: Մեր արդիւնքը այս պարագային շարք մը լրագրողներու ազատ արձակումն է: Թուրքիոյ հետ երկխօսութեան վերաբերեալ բազմաթիւ լաւ հիմնաւորուած կասկածներ կան, սակայն իմ կարծիքով արդիւնքները ցոյց կու տան, որ Ֆրանսայի ուղերձը դատարկութեան մէջ ուղղուած խօսք չէ», - նշած է Էմանուէլ Մաքրոնը:

Ֆրանսայի նախագահը ջերմօրէն ողջունած է Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարօ Փայլանը՝ նշելով, որ վերջինիս ձայնը կը հնչէ երբեմն անհաւասար միջավայրի մէջ, սակայն ան շատ աւելի կարեւոր է, քան շատերուն բարձրակոչ յայտարարութիւնները:

### Հայոց բանակի տոնը՝ ՌԱԿ Արմավիրի երիտասարդական ակումբում

«Կեցցե այն Հայաստանը, որը վաղն է գալու»

26 տարի շարունակ մեր օրը սկսվում է այս խոսքով, որն առաջին անգամ հնչել է հերոս Սովսէս Գորգիսյանի շուրթերից: Իսկապէս, գնալով համոզվում ենք այդ խոսքերի ճշմարտացիության մէջ. հայ ժողովուրդը դատապարտված է հավերժ ապրելու ու արարելու սուրբ դատով:

Հենց այս ոգով տոգորված՝ մենք՝ Արմավիրի ՌԱԿ երիտասարդական ակումբի անդամներս, հավաքվեցինք մեր գրասենյակում տոնելու Հայոց բանակի կազմավորման 26-ամյակը:

Մենք անցկացրինք հետաքրքիր քննարկում հայոց բանակի թեմայով, որի ընթացքում անդամներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր կարծիքը:

Օրվա երկրորդ առիթը ՌԱԿ Գերագույն խորհրդի նախագահ Վարդան Նազիրյանի եւ Կենտրոնական վարչության փոխատենապետ Կարեն Կակոյանի անակնկալ այցն էր մեր գրասենյակ: Այցի ընթացքում քննարկեցինք մեր կարևոր նախաձեռնությունները, որոնք պատրաստվում ենք իրականացնել այս տարի (նախաձեռնություններին մանրամասնորեն կարող եք ծանոթանալ այս հոդվածում):

Հետգրություն՝ Մեր մեծերի խոսքերը, անշուշտ, դառնում են իրականություն. մեր հորիզոնում պատկերվում է բոլորիս երազանքների հայրենիքը, որին հասնելու համար պետք է քայլել նրան ընդառաջ, այլ ոչ թե նստել և սպասել նրա գալուստի:



### Հ.Բ.Ը.Միութեան “Ա. Գալփաքեան” վարժարանի ծնողաց մարմնի Բարեկենդանեան խրախմանքը

Հ.Բ.Ը.Միութեան Ա. Գալփաքեան վարժարանի ծնողաց մարմինը սիրով կը հրաւիրէ ձեզ, Բարեկենդանեան խրախմանքին, որ տեղի պիտի ունենայ

**Շաբաթ 10/02/2018 երեկոյեան ժամը 18:00-ին**



դպրոցի «Հրանդ եւ Լուիզ Ֆէներճեան» սրահին ներս: Մեծերը ու փոքրիկները շատ հաճելի ժամանակ պիտի անցընեն երգ ու պարով, մրցանակներով, համեղ ուտելիքներով եւ ուրիշ անակնկալներով: Միտով կը սպասենք ձեր բոլորին:

**Մուտքի գին: մեծեր € 8,  
երեխաներ € 5**

Ο Σύλλογος Γονέων & Κηδεμόνων του σχολείου Α. Καλπακιάν της ΓΑΕΑ σας προσκαλεί στο Αποκριάτικο πάρτι που θα κάνει στις **10/02/2018** ημέρα **Σάββατο** και ώρα **18:00μμ.** Φορέστε την πιο τρελή και περίεργη στολή μικροί και μεγάλοι, ελάτε να χορέψουμε στις μελωδίες του DJ, να γελάσουμε με τα παιχνίδια και τους διαγωνισμούς και να ζήσουμε το πνεύμα των Αποκριών όλοι μαζί.

**Τιμή εισόδου: 8€ για μεγάλους,  
5 € για μικρους**

**XXX**

**Միքելի ծնոքը,**

Ա. Գալփաքեան վարժարանի ծնողաց մարմինը դարձեալ կը հրաւիրէ ձեզ,



**Շաբաթ 03/02/2018 երեկոյեան ժամը 18:00-ին.**

Հաճելի երեկոյ մը եւս վայելի ուտելիք եւ ձեր երեխաներու հետ մեր վարժարանին սրահին «Հրանդ եւ Լուիզ Ֆէներճեան» եւ բակին մէջ: Կրնան մասնակցիլ նաեւ ձեր ազգականները ու ընկերները միշտ ունենալով իրենց ուշադրութիւնը եւ հսկողութիւնը իրենց զաւակներու վրայ:

Այս Շաբաթ երեխաները առիթը պիտի ունենան Volleyball, basketball, Ping-Pong խաղալու եւ յաճելի ժամանակ անցընել: Պիտի ունենան նաեւ համեղ խորովածներ եւ զանազան համեղեղներ բոլորիս համար:

**«ԵՎԷՔ ԽԱՂԱՆՔ ՄԻՍՄԻՆ»**

Այսպէս ապահովուելով,

Ο Σύλλογος Γονέων & Κηδεμόνων της σχολής Α. Καλπακιάν της ΓΑΕΑ ανοίγει το **Σάββατο 03/02/2018** και ώρα **18:00μ.μ.** για να περάσουμε όλοι μαζί ακόμα ένα ευχάριστο απόγευμα μαζί με εσάς και τα παιδιά σας στο χώρο του σχολείου, στην αίθουσα «Χραντ& Λουίζ Φενερτζιάν» και στην αυλή μας. Μπορούν επίσης να λάβουν μέρος φίλοι και συγγενείς σας έχοντας πάντα οι ίδιοι την επίβλεψη και ευθύνη των παιδιών τους.

Αυτό το **Σάββατο** τα παιδιά θα έχουν την ευκαιρία να παίξουν **Βόλεϊ, Μπάσκετ, Πινγκ-Πονγκ** και να περάσουν ένα ευχάριστο απόγευμα. Επίσης θα ετοιμαστούν νόστιμα **χοροβάτς (ψητά)** και θα υπάρχουν **νόστιμες λιχουδιές** στη διάθεση όλων μας.

**«ΕΛΑΤΕ ΝΑ ΠΑΙΞΟΥΜΕ ΟΛΟΙ ΜΑΖΙ»**



### ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ Սրբոց Վարդանանց Ջորավարաց

Հովանաւորութեամբ  
Գեր. Հայր Յովսէփ Թ.Օ.Վ Պեգազեանի  
Վիճակաւոր Յունաստանի Կաթողիկէ Հայոց  
Թեմի Խորհրդատու Մարմնի

Կը դասախօսէ՝  
Ռոպէր Աթթարեան  
Ռատիօ Վատիկանի հայկական բաժնի  
պատասխանատու

Հինգշաբթի 08 Փետրուար 2018 երեկոյեան ժամը 8,00-ին  
Հայ Կաթողիկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ  
սրահէն ներս – **NEOS ΚΟΣΜΟΣ:**

Լիայոյս ենք որ կ'ընդառաջէք մեր հրաւերին եւ  
մեծ թիւով ներկայ կը գտնուիք՝  
նօգնելու եւ բարձր պահելու համար մեր պատմութեան  
գլխաւոր էջերէն մին:

Գեղարուեստական բաժին եւ հիւրասիրութիւն

### ՄԱՏՏԻՏ ՍՈՒՍՏՐՈՒՄԱՆ ՕՄԱԾԱ

Այսպէս ապահովուելով,

Այս պահուստը կը շարունակուի եւ կը  
ստացուի կրկին ու կը շարունակուի մինչեւ  
հասնուի ինքնակշիռ կշիռի: Կը շարունակուի  
մինչեւ հասնուի ինքնակշիռ կշիռի: Կը շարունակուի  
մինչեւ հասնուի ինքնակշիռ կշիռի:



**A.G.B.U. «Massis» -  
Bio Energy 14-3**

**A.G.B.U. «Massis» - 5\*5 Stars 9-1.**

Գրեցէ՛ք քեզ քանակական տեղեկութիւններ  
ու կը քանակական տեղեկութիւններ կը քանակական տեղեկութիւններ  
ու կը քանակական տեղեկութիւններ:

### Ճանաչութիւն

Մեր խորին յարգանքները եւ վստահութիւնը կը  
յայտնենք Յովսէփ եւ Տալիտա Լեպոյեաններու եւ Թովմարեան  
ընտանիքին իրենց սիրեցեալ խոր եւ ազգականին՝

### Ռոբէրտ Լեպոյեանի

մահուան տխուր առիթ:

### Նուիրատուութիւն

Յունահայ բարերարուհի, նուիրատու, հայրենասէր եւ եկեղեցասէր  
ազնուամտ Մարիա Լուիզ Ֆէներճեան, Փերիսթերիի Մ. Աստուածածին  
եկեղեցոյ նուիրած է արժեքաւոր հին  
աստղադիտակ սեղանի ծածկոց մը, որ  
վիճակահանութեան պիտի դրուի եւ  
շահող թիւը պիտի քաշուի  
Համբարձման տօնին օրը:



### Նուիրատուութիւն

Ան ի քաջալերանք Արարատ Մ.Ս.Միութեան Տիկնանց  
Մարմնին կը նուիրեն՝

Տիկ Լուիզ Ֆէներճեան 100 եւրո

Ընկերուհի Եղիս Խաչատուրեան 50 եւրո:



**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Այսու կը տեղեկացնենք, որ Փետրուար 4-ին Փերիսթերիի Առաջնորդանիստ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ մէջ առաւօտեան ժամը 10.00-ին Սուրբ Պատարագ պիտի մատուցէ Պէլճիքայի հոգեւոր հովիւ և Հայրապետական պատուիրակի փոխանորդ՝

**Հոգեշնորհ Տ.Զատիկ Վրդ. ԱՎԵՏԻՔԵԱՆ:**

*Յունահայոց Թեմական Խորհուրդ*

**Կարկանդակի Բաշխում**

Արարատ Մ.Ս.Միութիւնը սիրով կը հրաւիրէ Ձեր բոլորին կարկանդակի բաշխումի որ տեղի պիտի ունենայ՝

**Կիրակի, 11 Փետրուար 2018-ին  
Երեկոյեան ժամը 6.00-ին**

Հ.Բ.Ը.Մ.-ԱՐԱՐԱՏ կեդրոնի «Անանիա եւ Վարդուհի Խաչատուրեան» սրահին մէջ:

**ՅՈՒՇԱՏՕՆ**

**Հովանաւորութեամբ  
Յունահայոց Թեմական Խորհուրդի  
Եւ Կազմակերպութեամբ  
Ռամկավար Ազատական Կուսակցութեան**

Նուիրում

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ  
ՎԱԶԳԷՆ ԱՌԱԶԻՆ-ի**

**ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅ ԶԵՆՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
75-ԸԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ**

**տեղի պիտի ունենայ Կիրակի, 4 Փետրուար, 2018-ին  
Հ. Բ. Ը. Միութեան «Հրանդ եւ Լուիզ Տէներճեան»  
հանդիսասրահին մէջ, երեկոյեան ժամը 7.00-ին**

Յուշատօնը իր ներկայութեամբ պիտի պատուէ «Bruxelles»-ի Հայաստանեայց եկեղեցոյ հոգեւոր հովիւ, Տէր Զատիկ Վրդ. Աւետիքեան որ զաւագանակակիրը եղած է, Ամենայն Հայոց Վազգէն Ա. Հայրապետին, եւ իր անմոռանալի յուշերով պիտի վերակենդանացնէ անցեալի հետաքրքրական դրուագներ, որոնք պատահած են Ամենայն Հայոց Հայրապետի կեանքին մէջ:



**ԹԱՏԵՐԱԿԱՆ**



**Արարատ Մ.Ս.Միութեան  
“Ծիածան” թատերախումբը կը ներկայացնէ  
Յակոբ Պարոնեանի  
“Երկու Տիրոջ Մէկ Ծառան”**

կատակերգութիւնը յունարէն լեզուով,  
բեմադրութեամբ Հայկ Գասարճեանի:

**Շաբաթ 24 եւ Կիրակի 25 Փետրուար 2018-ին  
երեկոյեան ժամը 8.00-ին.**

**Δημορχείο Πέντη  
Αίθουσα Ιάκωβος Καμπανέλλης  
οδός Μπιχάκη 8**

**ՄԻԶԻՆՔ**

Արարատ Մ.Ս.Միութեան Տիկնանց Մարմինը կը կազմակերպէ աւանդական Միջինք-երեկոն,

**Երկուշաբթի՝  
12 Մարտ, 2018  
երեկոյեան  
ժամը 6.30-ին**

Արարատի “Անանիա եւ Վարդուհի Խաչատուրեան” սրահին մէջ:

Ներկաները պիտի համտեսեն Պահքի ճաշեր, պատրաստուած մեր տիկիններուն դալար ձեռքերով:

Երեկոն պիտի ձոխանայ գեղարուեստական յայտագրով:

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ  
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Մեփականութիւն  
ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻՒՆ  
Միսթու 33, Նիքէա, Յունաստան  
Համակարգչային  
շարուածքը եւ էջադրումը՝  
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի

Տնօրէն՝  
Ընկ. Մարգիս Խաչատուրեան  
Արտօնատէր -  
Փաստաբան՝  
ընկ. Յակոբ Տէսճեան

“NOR AΣXAP”  
Αρμένικη Εβδομαδιαία  
Εφημερίδα  
Ιδιοκτησία “ΑΡΑΡΑΤ”  
Φιλολογικό Αθλητικό Σωματείο

Διευθυντής  
Σαρκίς Χατσατουριάν  
Εκδότης -  
Ιάκωβος Φετζιάν Δικηγόρος

Σηστού 33 - TK 18450 - Νίκαια  
Τηλ: 210-4926085  
“NOR ASHKHAR”  
Armenian Cultural Social Weekly  
33 Sistou Str.  
GR 18450 NIKEA GREECE  
Tel-Fax: 00+30+210-4926085

**Պագար – վաճառք**

Արարատ Մ.Ս.Միութիւնը սիրով կը հրաւիրէ հայ հասարակութիւնը, առտնին-տնային ու տեստեղէններու պահածոներու մաքրութեան և այլ տնային իրերու բացառիկ պագարին:

Դուք ձեր այցելութեամբ, մատչելի գիներով ու զեղչով գնումներ կրնաք կատարել քան շուկայի հանրախանութիւններու ընդհանուր հասարակաց գիներէն:

Պագար-վաճառքին պիտի գտնէք հանրախանութային ու տեստեղէններու, տունի մաքրութեան հեղուկներ և փոշիներ և զանազան այլ իրեր:

**Վաճառքը տեղի կ'ունենայ Կիրակի 18 Մարտ 2018-ին առաւօտեան ժամը 10:00-էն մինչև երեկոյան 6:00: Հ.Բ.Ը.Մ.-Արարատ կեդրոնի Անանիա եւ Վարդուհի Խաչատուրեան սրահին ներս:**

ԱՐԱՐԱՏ Մ.Ս.Միութեան Վարչութիւն

Բացի իմբագրականներէն, յօդուածագիրներու տեսակէտներն ու գաղափարները անպայմանօրէն չեն արտայայտեր թերթին ուղեգիրը:



# Հ. Բ. Ը. Մ.

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵՂ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀՐԱԻԷՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Յանձնաժողովիս Վարչութիւնը, նկատի ունենալով Միութեան Ծրագրի ու Կանոնագրի 17, 18, 19 եւ 20 յօդուածները, այսու կը հրաւիրէ իր բոլոր իրաւասու անդամ-անդամուհիները, ներկայ գտնուելու տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ, Կիրակի 4 Մարտ 2018ի, առաւօտեան ժամը 10ին, Հ. Բ. Ը. Միութեան «Ա. Գալիլայեան» վարժարանի «Հրանդ եւ Լուիզ Տէներճեան» հանդիսասրահին մէջ, Նաֆիլիու փողոց, թիւ 11, Փալէօ Տալիքօ, հեռ. 210-9825685: Մեծամասնութիւն չգոյանալու պարագային, Ընդհանուր Անդամական Ժողովը պիտի յետաձգուի, որպէսզի վերջնականօրէն գումարուի յաջորդող Կիրակի 11 Մարտ 2018, նոյն ժամուն, նոյն վայրը եւ նոյն օրակարգով:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ներկայացում ու վաւերացում 2017 տարեշրջանի տեղեկագրին:
2. Ներկայացում 2017 տարեշրջանի նիւթական հաշուետուութեան:
3. Զեկոյց Հաշուեքննիչ Յանձնախումբի կողմէ:
4. Վաւերացում 2017 տարեշրջանի նիւթական հաշուետուութեան:
5. Ներկայացում ու վաւերացում 2018 տարեշրջանի նախահաշիւին:
6. Ոչ Հայ աշակերտներու յաճախում՝ Հ. Բ. Ը. Մ. «Ա. Գալիլայեան» վարժարանին:
7. Փոխարինել Հ. Բ. Ը. Մ. «Ա. Գալիլայեան» վարժարանի երկու դպրոցական ինքնաշարժները:
8. Զանազան այլ հարցեր:
9. Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութիւն:
10. Վարչութեան ընտրութիւն:

Ի դիմաց

Հ. Բ. Ը. Միութեան Յունաստանի Կեղր. Յանձնաժողովի Ատենադպիր Ատենապետ Մ. ԲՕՆԻՐՈՒ ԴՈՎՏ. Հ. ՄԱՐՈՒՔԵԱՆ

Ծանօթ.-


1) Ըստ Միութեան Ծրագրի ու Կանոնագրի 19րդ յօդուածին, Վարչութեան եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի թեկնածուները պէտք է կատարած ըլլան իրենց տնտեսական պարտաւորութիւնները եւ գրաւոր ներկայացնել իրենց թեկնածութիւնը, մինչեւ Շաբաթ 3 Մարտ 2018, կէսօրուայ ժամը 12ին, Միութեան գրասենեակը (Նաֆիլիու փողոց, թիւ 11, Փալէօ Տալիքօ):

2) Այն անդամ – անդամուհիները որ նախորդ տարիներու տնտեսական պարտաւորութիւնները չեն կատարած եւ կը փափաքին ներկայ գտնուելու Ընդհանուր Անդամական Ժողովին, կրնան կատարել իրենց պարտաւորութիւնները ըստ Միութեան Ծրագրի ու Կանոնագրի 6րդ յօդուածին, մինչեւ Ընդհանուր Անդամական Ժողովին վերջը, եթէ ոչ ինքնազօր պիտի չնկատուին Միութեան անդամ – անդամուհի:

Աթէնք, 30 Յունուար 2018

## ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒԻՆ ՄԷՋ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՆԱՐԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինութեամբ 2018 թ. հոչակուած է Երիտասարդութեան տարի: Այս ուրախալի եւ ոգեւորիչ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի Թանգարանները՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ եւ բարձր հովանիի ներքոյ, 2018 թ. ողջ ընթացքին պիտի իրականացնեն «Արարող ձեռքեր» խորագիրով ցուցահանդէսային նախագիծ:



«Հայերն այսօր»-ը, յղում կատարելով Սուրբ Էջմիածինի Թանգարաններու տնօրէնութեան ֆէյսպուքեան էջին, կը յայտնէ, որ նախաձեռնութիւնը նպատակ ունի աջակցելու Հայաստանի եւ Սփիւռքի երիտասարդ արուեստագէտներուն՝ հանրութեան առջեւ հանդէս գալու, ներկայացնելու իրենց ստեղծագործութիւնները, մտորումները եւ գալիքի իրենց տեսլականը:

Ցուցահանդէսները պիտի բացուին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ (Գեորգեան հոգեւոր ճեմարանի սրահ), նիւթը ազատ է եւ կ'ընդգրկէ կերպարուեստի բոլոր ճիւղերը (գեղանկար, քանդակ, լուսանկար եւ այլն): Կազմակերպչական ողջ աշխատանքները պիտի իրականացնէ Սբ. Էջմիածինի Թանգարաններու գրասենեակը:

«Արարող ձեռքեր» նախագիծին կրնան մասնակցիլ ուսանող եւ նորաւարտ երիտասարդ արուեստագէտները՝ դիմելով Սուրբ Էջմիածինի Թանգարաններու տնօրէնութիւն հետեւեալ հասցեով. [web.facebook.com/HolySeemuseum/](http://web.facebook.com/HolySeemuseum/) դիմումները կ'ընդունուին մինչեւ փետրուար 10 (անհրաժեշտ է ներկայացնել համառօտ ինքնակենսագրական, 5-10 ստեղծագործութեան լուսանկար):

## ՀԱԶԱՐԱԻՈՐ ՄԱՐԴԻԿ Կ'ԱՅՑԵԼԵՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՔԱՐԱՄԱՆ ՆԱՀԱՆԳ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՄՆԵԼՈՒ

«Էրմէնի հապէր» վ կ ա յ կ ն չ է լ ո վ թրքական «Անատոլու» լրատուական գործակալութիւնը՝ կը յայտնէ, որ Թուրքիոյ Քարաման նահանգին մէջ գտնուող Սուրբ Աստուածածին հայկական եկեղեցւոյ



առաստաղի որմնանկարները տեղացի եւ օտարերկրացի զբօսաշրջիկներու կողմէ մեծ հետաքրքրութեան կ'արժանանան:

Քաղաքի հնագոյն Թափուճաք թաղամասին մէջ գտնուող եկեղեցին կը համարուի բիւզանդական ժամանակաշրջանէն մնացած պահպիլիք եկեղեցւոյ օրինակ:

Ըստ աղբիւրին, եկեղեցւոյ կառուցման թուականին շուրջ ստոյգ տեղեկութիւն չկայ. ան կը թուագրուի 17-18-րդ դարերուն:

Եկեղեցին 2007 թուականին անցած է Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան պահպանութեան տակ եւ՝ վերականգնուած:

Նահանգի Մշակոյթի եւ զբօսաշրջութեան վարչութեան պետ Ապտուլլա Քըլըչ «Անատոլու»-ին պատմած է, որ եկեղեցւոյ որմնանկարները յայտնաբերուած են միայն 2007 թուականին, երբ եկեղեցւոյ մէջ վերականգնողական աշխատանքներ կատարուած են: Մինչ այդ որմնանկարները պատուած եղած են գաճով:

«Ամէն տարի հազարաւոր մարդիկ կու գան այս որմնանկարները տեսնելու: Նման որմնանկարներ ամբողջ Քարամանի մէջ միայն այս եկեղեցւոյ մէջ կան, որ կ'աւելցնէ եկեղեցւոյ կարեւորութիւնը», ըսած է ան:

Քըլըչ պատմած է, որ մինչեւ 2007 թուականը եկեղեցին որոշ ժամանակ օգտագործուած է որպէս բնտ: Բսկ այժմ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենան մշակութային տարբեր ձեռնարկներ: